# «ՀԱԷԿ» ՓԲԸ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

№ 9Ա  12 փետրվարի 2026թ.

## ՈՐՈՇՈՒՄ

### ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանքների առկայությունը՝ որոշում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

| Գնման ընթացակարգի | | | | Մասնակցի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ծածկագիրը | չափաբաժնի համարը | չափաբաժնի անվանումը | չափաբաժնի գնման գինը /ՀՀ դրամ/ | Անվանումը | ՀՎՀՀ | Գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմանների չկատարման հանգամանքների առաջացման ամսաթիվը | Պատվիրատուի անվանումը | Իրավական հիմք | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-156/25 | 1 | Տուրբինային յուղ | 5400000 | «Հիպոկրատ Դենտ» ՍՊԸ | 03584501 | ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ձորաղբյուր, Այգետարածք 4 թղմ., Այգետնակ 115 | 04.02.2026 թ. | «ՀԱԷԿ» ՓԲԸ | «Հիպոկրատ Դենտ» ՍՊԸ-ին պայմանագրի կատարման և (կամ) որակավորման ապահովում ներկայացնելու պահանջը, պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի շնորհումը տրվել էր ս.թ հունվարի 22-ին: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պայմանագրի և (կամ) որակավորման ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու | «Հիպոկրատ Դենտ» ՍՊԸ-ն չի ստորագրել պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը |
| | 6 | Սինթետիկ կոմպրեսորային յուղ | 1307500 | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել ապահովումը: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: «Հիպոկրատ Դենտ» ՍՊԸ-ն՝ հանդիսանալով ընտրված մասնակից, ստորագրված պայմանագիրը չի բեռնել էլեկտրոնային աճուրդի համակարգ և չի ներկայացրել պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումները: | |

(ստորագրություն)

Է. Մարտիրոսյան